

«ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ»  
 ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	<p>«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (COAF) նախատեսում է ՀՀ Լոռու մարզի, Դեբետ համայնքի բնակիչների հետ համատեղ վերակառուցել համայնքի թվով 6 տների տանիքները: Ծրագրի հիմնական ֆինանսավորումը իրականացվում է «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի միջոցներով: Ֆինանսավորման տեղաբաշխումը իրականացվելու է հետևյալ կերպ՝ շինարարի կողմից վերակառուցվող տանիքի շինարարական աշխատանքների նախահաշվի 80% վճարելու է հիմնադրամը, իսկ 20% բնակիչը: Ծրագիրը արդեն ներկայացվել է Դեբետ համայնքի բնակիչներին և ձեռք է բերել մեծ հեղինակություն: Ծրագրի նպատակն է բարելավել Դեբետի բնակիչների կենցաղային պայմանները: Ավելի որոկյալ, ապահով և ջերմամեկուսացված տանիք ստանալով, բնակիչները ձմռան ցուրտ ամիսներին կծախսեն մի քանի անգամ քիչ էներգիա իրենց բնակարանները ջեռուցելու համար: Այս ծրագրի օգնությամբ Դեբետ համայնքի պատկերը երկնքից այլևս կփոփոխվի: Տանիքները փուլ առ փուլ կվերափոխվեն և կգա մի օր երբ բոլոր տանիքները կլինեն կարմիր, ապահով, ջերմամեկուսացված և էկոլոգիապես մաքուր: Սա Դեբետի զարգացման հիմնական ծրագրի միայն մեկ փոքր մասն է: Մենք հույս ունենք, որ հաջորդ փուլով մասնակիցների թիվը կլինի անհամեմատ շատ:</p>
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	<p>Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով՝ օրենքով սահմանված արտոնություններից:</p>
3.	Բարեգործը	<p>«Չիլդրեն Օֆ Արմենիա ֆանդ Ինք.», Նյու Յորք, ԱՄՆ, 149 5-րդ ավենյու, սենյակ 500 (Children of Armenia Fund Inc. 149 5th Ave., Suite 500, New York 10010, USA. և դոկտոր Գարո Հ. Արմենյը:</p>

4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ (ՀՀ քաղ. Երևան 0010, Մելիք Ադամյան 2/2, ՀՎՀՀ՝ 02569972):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	<ul style="list-style-type: none"> <li>• ՀՀ Լոռու մարզ, Դեբետ համայնք</li> <li>• Համայնքային զարգացում</li> </ul>
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 21,768,600 (քսանմեկ միլիոն յոթ հարյուր վաթսուներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Լոռու մարզի Դեբետ համայնք:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2021 թվականի հոկտեմբերի 10-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 30-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Թվով 6 տան վերակառուցման աշխատանքներ ընդամենը 21,768,600 ՀՀ դրամ արժողությամբ, 2021 թվականի հոկտեմբերի 10-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 30-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի շրջանակներում ներմուծումներ չեն նախատեսվում: Ծրագրի շրջանակներում կնքվելու են միայն շինարարական աշխատանքների կատարման կապալի պայմանագրեր 21,768,600 ՀՀ դրամի շրջանակներում: Այդ պայմանագրի շրջանակներում կապալառուն պարտավորված է լինելու իր սեփական միջոցներով և նյութերով իրականացնել տանիքների վերակառուցումը:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական	Նախատեսվում է համագործակցել Հայաստանի Հանրապետության կառավարության, Լոռու մարզպետարանի, Դեբետի համայնքապետարանների հետ:

	ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ս. ՊԱՊԻԿՅԱՆ